

Քանոյ  
թշնամու

Bookmark

Margaret Mitchell

Gone  
with the wind

BOOKMARK

Մարզարես Միտչել

Քամոյ  
քշվածները

Վեպ

Հատոր առաջին

Թարգմանությունն անգլերենից՝  
Անուշ Սեդրակյանի



ԵՐԵՎԱՆ  
2021

ՀՏՏ 821.111(73)-31 Միտչել  
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44  
Մ 756

Միտչել Մարգարետ  
Մ 756 Քամուց քշվածները: Վեպ / Մ. Միտչել; Թարգմանությունն անգլերենից՝  
Ա. Սեդրակյանի.- Եր.: Newmag, 2021. Հատոր առաջին.- 592 էջ:

Վեպի գործողությունները տեղի են ունենում Զորջիա նահանգի Քլեյթոն շրջանում և  
Ատլանտա քաղաքում: Ամերիկայի քաղաքացիական պատերազմի և վերակառուցման  
դարաշրջանն է: Պլանտացիաների հարուստ սեփականատիրոջ երես առաջ դուստրը՝  
Սքարլեթ Օ'Հարան, պատերազմի ժամանակ և դրանից հետո պետք է պայքարի  
սովի, աղքատության դեմ, պահպանի հորից ժառանգություն ստացած հողակտորը  
և փորձի գտնել իր երջանկությունը: Սա Մոխրոտիկի պատմությունն է՝ հակառակ  
շարադրանքով. հարուստ և անհոգ գեղեցկութին աղքատության ու սովի է մատնվում:  
Վեպն անհոգ աղջկա դժվարին հասունացման մասին է:

ՀՏՏ 821.111(73)-31 Միտչել  
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44



Գրքի գլխավոր գործընկեր  
«Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ  
[www.ena.am](http://www.ena.am)

ISBN 978-9939-884-23-3

Copyright © 1936 by The Macmillan Company

Copyright renewed©1964 by Stephens Mitchell and Trust Company of Georgia as Executors of  
Margaret Mitchell Marsh. Copyright renewed©1964 by Stephens Mitchell.

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են  
«Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

*Մաս առաջին*

BOOKMARK

## ❖ Գլուխ 1 ❖

Աքարլեթ Օ՛Հարան գեղեցկուիի չէր, բայց նրա հմայքի ու կախարդանքի գերին էին դառնում շատ տղամարդիկ, որոնց թվում էին նաև Թարլթոն Երկվորյակները: Նրա դեմքին բացառիկ կերպով զուգակցվում էին մոր՝ ֆրանսիական ծագումով ազնվականի անսովոր դիմագծերը և առողջ, ծանրաշարժ իռլանդացի հոր խոշոր, արտահայտիչ դիմախաղը: Լայն այտոսկրերով և սուր կզակով Սքարլեթի դեմքն ակամա գրավում էր մարդկանց հայացքները, հատկապես առանձնանում էին շեղ, բաց կանաչ, թափանցիկ աչքերը՝ սև թարթիչների շրջանակի մեջ: Շուշանաթուր ճակատին դեպի քունքերը ձգվող անթերի հոնքերն էին. այդ ճերմակ մաշկը՝ հարավի կանանց հպարտությունը, որը նրանք պաշտպանում էին Զորջիայի կիզիչ արևից՝ գլխարկների, քողերի և ձեռնոցների օգնությամբ:

Ստյուարտ և Բրենտ Թարլթոնների ընկերակցությամբ, իր հոր ընդարձակ կալվածքի՝ Տառայի շեմքին նստած, Սքարլեթն աչք էր շոյում: 1861-ի ապրիլյան պայծառ օրը մոտենում էր ավարտին: Սքարլեթի ծաղկավոր, կանաչ զգեստը, որը կարելու համար պահանջվել էր տասներկու յարդ մուսլին, փրփրադեզ ալիքների նման սփռվել էր շուրջը: Այն ներդաշնակորեն համադրվում էր անկրունկ, մետաքսե, կանաչ մաշիկների հետ, որ հայրը նոր էր բերել Ատլանտայից: Զգեստի վերնամասն ամուր գրկում էր Սքարլեթի իրանը՝ ի ցուց դնելով կոմսությունում ամենաբարալիկ մեջքը և լավ ձևավորված կուրծքը: Զգեստի կոկիկ դարսերը, ծնկներին դրված փոքր, սպիտակ ձեռքերը կարող էին մոլորեցնել շատերին, մինչդեռ անհանգիստ, կրակուտ և կամային աչքերը հակասում էին բարձրաշխարհիկ զսպվածությանը և մատնում աղջկա իրական բնույթը, նրա աշխարհիկ վարքագիծը մոր խրատների և դայակի հանդիմանությունների արդյունքն էր, իսկ աչքերը՝ բնության պարզեց:

Աքարլեթի երկու կողքերին, բազկաթոռներին, ազատ փովել էին երկվորյակները՝ հմուտ հեծյալների երկարաժիտ կոշիկներով, մկանուտ ոտքերն առաջ ձգած: Տղաները ծիծաղում էին և շաղակրատում, իսկ արևի շողերը, թափանցելով զարդանախշած ապակիների միջով, սահում էին նրանց դեմքերին՝ ստիպելով կկոցել աչքերը: 19-ամյա երկվորյակները հաղթանամ էին, մկանուտ, արևայրութով, կարմրամազ, երկուսն էլ հագել էին կապուտ բաճկոն, մանանեխի գույնի տաքատ, և անհնար էր նրանց զանազանել, ինչպես բամբակի ծաղիկները:

Նորափիթիթ սաղարթի զմրուխտե ֆոնին մայր մտնող արևի շեղ շողերի տակ փայլփլում էին ծաղկած հոնենու ծերմակ ճյուղերը: Երկվորյակների ծիերը՝ տերերի պես ոսկեգույն աշխետներ, կարմրամազ, կապված էին շքամուտքի ծառուղու մոտ, իսկ ծիերի ոտքերի մոտ գզվոտվում էին անհանգիստ, նիհար որսաշները, որոնք միշտ ուղեկցում էին երկվորյակներին: Մի փոքր հեռու պառկած էր դալմատինյան դոգը և իսկական ազնըվացեղ շան նման համբերությամբ սպասում էր իր ընթրիքին:

Երկվորյակները, ծիերն ու որսաշները ոչ միայն անբաժան ընկերներ էին, այլև մտերիմներ: Նրանք առողջ էին, երիտասարդ, ծարպիկ և ծկուն: Թե՛ մարդիկ և թե՛ կենդանիները կենսախինդ էին և անհոգ, կրակոտ և վտանգավոր, բայց նրանք հեզ ու խոնարի էին այն մարդկանց ձեռքերում, որոնք գիտեին, թե ինչպես պետք է կառավարել իրենց:

Երեք երիտասարդներն էլ սովոր էին ագարակատիրոց ճոխ կյանքին, նրանց բոլոր քմահաճույքներն անմիջապես կատարվում էին, բայց նրանք բնավ էլ երեսառած անբաններ չեին: Բաց երկնքի տակ կյանքն անցկացնող գյուղաբնակների հատուկ աշալրջությունն ու կենսախնդությունը բնորոշ էր այդ մարդկանց, զգացվում էր, որ նրանք գլուխները չեին ծանրաբեռնում գրքային տաղտկալի ծշմարտություններով: Զորջիայի Քլեյթոն շրջանում իրականությունն այլ էր, քան Սավաննայում, Օգուստայում և Չարլսթոնում, կյանքն այստեղ ավելի պարզ էր ու հասարակ: Հարավի առավելնստակյաց ինարնակները վերևսից էին նայում Զորջիայի հյուսիսում ապրողներին: Հյուսիսային այդ տեղանքում դասական կրթություն չունենալը բնավ ամոթալի չէր, եթե մարդու խելքը կտրում էր առավել կարևոր այնպիսի հարցերում, ինչպիսիք էին որակյալ բամբակ ածեցնելը, լավ ծիավարելը, դիպուկ կրակելը, նրբորեն սիրահետելը, ջենթլմենաբար խմիչք մատուցելը և այլն:

Երկվորյակները գերազանց տիրապետում էին այդ հմտություններին, սակայն բացարձակ զուրկ էին գրքային որևէ իմաստություն մտապահելու կարողությունից: Նրանց ընտանիքին էր պատկանում շրջանի ծիերի ու ստրուկների ամենամեծ թվաքանակը, բայց տղաներն ավելի քիչ քերականություն գիտեին, քան նրանց հարևան քրեքերների\* աղքատ ընտանիքը:

Հենց այդ էր պատճառը, որ այդ ապրիլյան պայծառ օրը Ստյուարտը և Բրենտը պարապ ժամանակ էին անցկացնում Տառայի բակում: Նրանց հենց նոր հեռացրել էին Զորջիայի համալսարանից, ինչը չորրորդն էր վերջին երկու տարում: Նրանց ավագ եղբայրները՝ Թոմը և Բոյդը, երկվորյակների հետ տուն վերադարձան, քանի որ չցանկացան ուսանել իրենց եղբայրներին վտարած ուսումնական հաստատությունում: Ստյուարտի և Բրենտի համար համալսարանից հեռացված լինելը մի զվարժալի կատակ էր, և Սքարլեթը, որ Ֆայեթվիլի կանանց ակադեմիան ավարտելուց հետո ձեռքը գիրք չէր վերցրել, համակարծիք էր նրանց հետ:

— Վստահ եմ, որ երկուսդ էլ բնավ չեք վշտացել համալսարանից հեռացվելու համար: Բայց ի՞նչ կասեք Բոյդի մասին: Նա ուզում էր կրթություն ստանալ, իսկ ձեր պատճառով դուրս եկավ Վիրջինիայի, Ալաբամայի և Հարավային Կարոլինայի համալսարաններից: Այդպես նա երբեք ուսում չի ստանա:

— Դե, նա կարող է իրավագիտություն սովորել դատավոր Պարմալիի գրասենյակում՝ Ֆայեթվիլում, – անհոգաբար պատասխանեց Բիլը, – միևնույն է, մենք կիսամյակը չենք ավարտելու:

— Բայց ինչո՞...

— Որովհետև պատերազմ է լինելու, այ իիմարիկ:

— Ամեն վայրկյան կարող է պատերազմ սկսվել: Հուսով եմ՝ չես կարծում, որ մենք պատերազմական ժամանակներում պիտի գնանք դասի:

— Դուք գիտեք, որ ոչ մի պատերազմ էլ չի լինի, – ասաց Սքարլեթը ձանձրացած, – պարապ զրուցներ են: Պարոն Էշլի Վիլքսը և նրա հայրն անցյալ շաբաթ ասացին հայրիկին, որ մեր հանձնակատարները բարեկամական համաձայնության են գալու պարոն Լինկոլնի հետ Կոնֆեդերացիայի խընդրի շուրջ: Ցանկիները չափից դուրս վախկուտ են մեզ հետ կոիվ սկսելու համար: Պատերազմ չի լինելու, և ես չեմ ուզում դրա մասին լսել:

\* Քրեքեր - ԱՄՆ-ի հարավային նահանգներում աղքատ սպիտակամորթներին տրվող ժարգոնային անվանում: (Ծանոթագրությունները՝ **newmag**-ի):

— Ինչպես թե չի լինելու, – այլայլված բացականչեցին երկվորյակները, կարծես խաբեռլթյան զոհ էին դարձել:

— Սիրոնի՞կս, աղավնյա՞կս, իհարկե, պատերազմ լինելու է: Հսարավոր է, որ յանկիները մեզնից վախենում են, բայց երկու օր առաջ Սամթեր ամրոցի ջախջախիչ ռմբակոծումով գեներալ Բորգարդը նրանց այնպիսի հարված հասցրեց, որ նրանք ստիպված են եղել կռվել, այլապես վախկոտ կիամարվեին և ամբողջ աշխարհի առաջ ամոթով կմնային: Իսկ ինչ վերաբերում է Կոնֆեդերացիային...

Սքարլեթը ծամածոեց դեմքը՝ անհամբեր ու ձանձրացած:

— Եթե մի անգամ էլ արտասանեք այդ «պատերազմ» բառը, ես տուն կգընամ և դուռը ներսից կկողպեմ: Ոչ մի բառ ինձ այդպես չի ձանձրացնում, մեկ էլ երևի «անջատում» բառը: Հայրիկն առավոտից իրիկուն պատերազմից է խոսում, նրան այցելության եկած պարոնները խոսում են Սոմթեր ամրոցի և Նահանգների իրավունքների մասին: Ուրախ եմ, որ գոնե Զորջիան անջատվեց Ծննդյան տոներից հետո, թե չէ դա էլ չեինք ունենա: Մի անգամ էլ խոսք բացվի այդ մասին՝ տուն կգնամ, դուռն էլ կկողպեմ:

Սքարլեթն իր խոսքի տերն էր. նա տանել չէր կարողանում այն զրուցները, որոնք անձի շուրջը չեին պտտվում: Այնուամենայնիվ, այդ բառերն արտասանելիս, օրիորդը ժպտում էր՝ ցուցադրելով այտերի փոսիկները, և թիթեռնիկի թևերի պես արագ-արագ իրար էր խփում սև, արտահայտիչ թարթիչները: Տղաները գերված էին նրա հմայքով, ինչը շատ լավ զգում էր Սքարլեթը, և շտապեցին ներողություն խնդրել նրան հոգնեցնելու համար:

Սքարլեթի հետաքրքրության բացակայությունը բնավ չագդեց տղաների՝ նրա հանդեպ ունեցած վերաբերմունքի վրա: Ավելին, նրա վարկանիշն ավելի բարձրացավ, քանի որ պատերազմը տղամարդկանց գործն էր, կանայք դրա հետ առնչություն չունեին: Այսպիսով, Սքարլեթի անտարբերությունն ընկալվում էր իբրև կանացիության վառ ապացուց:

Շեղելով տղաների ուշադրությունը պատերազմից՝ Սքարլեթը կրկին անդրադավ իրեն հետաքրքրող հարցին.

— Եվ ի՞նչ ասաց ձեր մայրը, երբ իմացավ, որ ձեզ հեռացրել են համալսարանից:

Տղաները շվարած նայեցին իրար: Նրանք իիշեցին իրենց մոր արձագանքը, երբ տնօրինության պնդմամբ ստիպված էին լքել Վիրջինիայի համալսարանը:

— Դե՛ք ծոր տվեց Ստյուարտը, — նա դեռ որևէ բան ասելու հնարավորություն չի ունեցել: Մենք Թոմի հետ տնից վաղ դուրս եկանք, մինչ մայրիկը կարթանար: Թոմը բուն է դրել ֆոնտեյնների տանը, իսկ մենք եկել ենք ձեզ մոտ:

— Իսկ անցած գիշեր, երբ տուն եկաք, մի՞թե նա բան չասաց:

— Անցյալ գիշեր բախտներս բերեց: Մեր տուն հասնելուն պես բերեցին այն նժույգը, որ մայրիկը գնել էր Ասլանտայում, և ամեն ինչ խառնվեց իրար, որովհետև այդ աժդահա վայրենին... Սքարլե՛թ, իորդ պիտի ասես, որ շուտ գնա ու տեսնի դրան: Իրեն ուղեկցող ձիապանին տանջամահ արեց և քացիներով խեղճացրեց երկու սևամորթի, որոնք դիմավորել էին նրան Զոնզբորոյի կայարանում: Իսկ մեր գալուց առաջ նա քարուքանդ էր արել իր ախոռը և մահվան դուռը հասցրել մայրիկի սիրած նժույգներից մեկին՝ Ելակին: Մենք տեսանք մայրիկին ախոռում՝ շաքարի պարկը ձեռքին: Նա փորձում էր շահել ձիու սիրտը, և, ասեմ, դա նրան հաջողվում էր: Սևամորթները՝ շնչակտուր ու լեղածաք, կախվել էին ձիու սանձից, բայց մայրիկը ձիու հետ այնպես էր զրուցում, կարծես իին ընկերներ լինեին, ու ձին նրա ձեռքից շաքար էր ուտում:

Մեզ նկատելով մայրիկն ասաց.

— Տեր Աստված, դարձյալ երեքդ էլ տանն եք: Դուք Եգիպտոսի ժանտախտից էլ վատ աղետ եք:

Այդ ժամանակ ձին սկսեց փնչացնել և հետ-հետ գնալ, ու մայրիկն ասաց.

— Չքվե՛ք այստեղից: Չե՞ք տեսնում, որ իմ ձիուկը նյարդայնանում է: Դե, մենք էլ գնացինք քնելու, իսկ առավոտ վաղ արթնացանք, նախքան նա մեզ կբռներ: Բոյդին թողեցինք, որ հետը լեզու գտնի:

— Ձեր կարծիքով՝ նա կծեծի՞ Բոյդին:

Սքարլեթը կոմսության բոլոր բնակիչների նման զարմացած էր իր հասուն որդիների հանդեպ միսսիս Թարլթոնի վերաբերմունքից, որն արտահայտվում էր տղաների մեջքին ամեն պատեհ առիթով մահակ իջեցնելով:

Բեատրիս Թարլթոնը բազմազբաղ կին էր: Բամբակի մեծ պլանտացիա ուներ և ոչ միայն կառավարում էր հարյուրավոր սևամորթ ստրուկների և ութ որդիների կյանքը, այլև նահանգի ամենամեծ ձիաբուծական ֆերմայի տերն էր: Շատ տաքարյուն էր, որդիների չարաձափ արարքներից հաճախ հունից դուրս էր գալիս, և թեպետ ոչ ոք իրավունք չուներ հարվածել ձիերին կամ ստրուկներին, սակայն, տիկնոց կարծիքով, իր որդիներին լավ քոթակը երբեք չէր խանգարի:

— Չէ՛, Բոյդին չի ծեծի: Բոյդին մատով անգամ չի դիպչի: Նախ Բոյդը տարիքով ամենամեծն է, հետո մարմնով շատ նվազ է,— ասաց Ստյուարտը՝ հպարտանալով իր ամրակազմությամբ,— դրա համար էլ Բոյդին թողեցինք տանը, որ բացատրություններ տա: Մայրիկը պիտի ձեռք քաշի մեզ քոթակելուց: Մենք տասնինը տարեկան ենք, իսկ նա մեզ կաթնակերների տեղ է դնում:

- Իսկ ձեր մայրիկը նո՞ր ձիով է գնալու բարբեքյուի՝ Վիլքսերի մոտ:
- Նա ուզում է, բայց հայրիկն ասում է, որ դա շատ վտանգավոր է: Քոյրիկներն էլ դեմ են: Ասում են՝ լավ կլիներ, որ մայրիկը վերջապես երեկոյթի գնա իսկական լեդիի նման, այսինքն՝ կառքով:
- Հուսով եմ՝ վաղն անձրև չի գա, — ասաց Սքարլեթը, — մի շաբաթ շարունակ անձրևում է: Շատ վատ է, երբ բարբեքյուն բացօթյա տարածքից տեղափոխվում է տուն:
- Վաղը պայծառ օր է լինելու, իունիսյան եղանակի պես շոգ, — ասաց Ստյուարտը, — դու մայրամուտի՞ն նայիր, դրանով միշտ կարելի է կանխագուշակել եղանակը:

Նրանք նայում էին հորիզոնի երկայնքով ձգվող՝ Զերալդ Օ'Հարայի նոր հերկված բամբակի դաշտերին. մայր մտնող արևի բոստրագույն ցոլքերը հանգչում էին ֆլինտ գետի մյուս ափի բլուրների հետևում, և ապրիլյան շոգը վերածվում էր մեղմ ու զով զեփյուրի:

Այդ տարի գարունը շուտ էր եկել իր հորդառատ անձրևներով, դեղձենիների վարդագույն ծաղկունքով, իոնենու ծաղկած ծառերի սպիտակ աստղիկները զարդարել էին գետի սև հունը և հեռավոր բլուրները: Մայրամուտի բոստրագույն ցոլքը գունավորում էր հերկված դաշտերի երկար ակոսները՝ կարմրավուն վարելահողին հաղորդելով ալ կարմիր գույն:

Խոնավ, քաղցած հողը լանջաբաց սպասում էր բամբակի սերմերին, մարգերի ավագե բլրակները գագաթի մոտ վարդագույն երանգ էին ստացել, իսկ մարգերի ակոսների խորշերում գույնը խտանում էր՝ երևալով մե՛կ ալ կարմիր, մե՛կ շագանակագույն, մե՛կ էլ բոստրագույն: Սպիտակ ներկված առանձնատունը նմանվում էր ամեհի ծովում լողացող կղզու: Ծովն ալիքվում էր, գալարվում, մահիկաձև քուլաները քարանում էին այն պահին, երբ վարդագույն կոհակները ճեղքում էին մակերևույթը:

Մարգերն այնպես ուղիղ չէին ձգվում, ինչպես, ասենք, Զորջիայի կենտրոնական պլանտացիաների շիկահողում կամ ափամերձ պլանտացիա-

Ների սևահողերում: Հյուսիսային այս զարդարակի տարածքը հերկվում էր ալիքաձև, որ բերրի սևահողը չցվի գետի մեջ: Դա վայրի հող էր, որ անձրևներից հետո արյան գույն էր ստանում, իսկ երաշտի ժամանակ դառնում էր քարե փոշի՝ լավագույն հողը բամբակ աճեցնելու համար: Սպիտակ տների, հերկված խաղաղ դաշտերի, անշտապ հոսող գետերի երկիրն իրականում լեցուն էր կտրուկ հակադրություններով, պայծառ արևի և ահագնացող ստվերների ընդմիջվող հերթագայությամբ:

Բաց ցանքատարածությունները, մղոններ ծգվող բամբակե դաշտերը խաղաղ և ինքնագոհ ժպտում էին արևին: Դաշտերն օղակող կուսական անտառները սառն էին ու մթամած նույնիսկ ամենաշոգ եղանակին, առեղծվածային, անգամ չարագուշակ: Նրանք սոճիների մեղմիկ հոգոցներով և համբերատար սպասումով կարծես գուժում էին. «Զգուշացե՛ք, զգուշացե՛ք, մենք ժամանակին այստեղ տեր ենք եղել և նորից կարող ենք տիրանալ ամեն ինչի»:

Ագարակի շեմքին նստած երիտասարդների ականջին էին հասնում սըմբակների կտկտոցը, ասպանդակների զնգզնգոցը, սևամորթների անհոգ ծիծաղը: Դաշտերում աշխատող ստրուկները ջորիների հետ տուն էին վերադառնում: Տնից լսվում էր Սքարլեթի մոր՝ Էլին Օ'Հարայի ծայնը: Նա կանչում էր փոքր, սևամորթ աղջնակին, որի մոտ էր տան բանալիների խուրձը:

Մանկական զնգուն ծայնն արձագանքեց՝ հիմա, մե՛մ, հետո լսվեցին դեպի հետնախոհանոց տանող ոտնաձայները: Էլին Օ'Հարան պատրաստվում էր տուն դարձած աշխատավորներին ծաշ մատուցել: Փորքը՝ Տառայի սպասյակ-կառավարիչը, ընթրիքի սեղանն էր գցում:

Այդ ծայները լսելուն պես երկվորյակները հասկացան, որ իրենց տուն զնալու ժամանակն է: Բայց մորը հանդիպելու հեռանկարն այնքան տիած էր, որ նրանք ոտքները կախ գցեցին՝ Սքարլեթից հրավեր ստանալու ակնկալիքով:

— Ի դեպ, Սքարլե՛թ, — ասաց Բրենտը, — ինչ վերաբերում է վաղվա օրվան, ենթադրենք, մենք տուն չեինք եկել ու չեինք իմացել պարահանդեսի և բարբեքյուի մասին: Բայց սա չի նշանակում, որ մենք պիտի զրկված լինենք քեզ հետ պարելու հնարավորությունից: Հուսով եմ, դու չես խոստացել ուրիշներին քո բոլոր պարերը:

— Իհարկե, խոստացել եմ: Ի՞նչ իմանայի, որ հետ եք գալու: Ուզում էիք պարահանդեսին ցցվա՞ծ մնայի պատի մոտ, միայնակ, աչքս ջուր կտրած ձեր ծանապարհին:

— Դու և միայնա՞կ,— լիաթոք հոհոացին տղաները: — Դե, լսիր, սիրելի՞ս: Առաջին վալսիդ զուգընկերը ես եմ, երկրորդ պարը տալիս ես Ստյուարտին, իսկ հետո կճաշես մեզ հետ: Անցյալ պարահանդեսի նման կնստենք աստիճաններին, և Մամմի Զինսին մեզ համար բախտագուշակությոն կանի:

— Չեմ սիրում Մամմի Զինսիի գուշակությունները: Ինձ համար գուշակել է, որ ամուսնանալու եմ սևահեր, սև բեղերով տղամարդու հետ, իսկ ես սև մազերով տղամարդկանց տանել չեմ կարողանում:

— Քեզ դուր են գալիս կարմրահեր տղամարդիկ, ծիշտ չե՞՝, սիրելի՞ս, խնդմնդաց Բրենտը, — դե, իենց իհմա խոստացիր, որ կպարես մեզ հետ բոլոր վալսերը, իսկ ճաշի ժամանակ կնստես մեր կողքին: Եթե խոսքիդ տերը լինես, քեզ մի գաղտնիք կասենք:

— Ի՞նչ գաղտնիք, — բացականչեց Սքարլեթը՝ երեխայի պես ոգևորված:

— Դա այն գաղտնիքն է, որ մենք լսեցինք Ատլանտայում, Սթյու: Բայց չե՞ որ խոստացել էինք ոչ մեկին չասել:

— Մեզ այդ մասին պատմել է միսս Փիթին:

— Ո՞վ:

— Դե, Էշլի Վիլքսի քույրը, որն ապրում է Ատլանտայում, միսս Փիթի Համիլթոնը՝ Զարլզի և Մելանիի հորաքույրը:

— Ճանաչում եմ նրան, ավելի տարօրինակ տիկին կյանքումս չեմ տեսել:

— Երեկ Ատլանտայում մենք սպասում էինք տուն տանող գնացքին, բեռները բարձում էին բեռնատար վագոն, երբ նա կանգ առավ և մեզ հետ զրոյցի բռնվեց ու ասաց, որ վաղը Վիլքսերի պարահանդեսին հայտարարվելու էնշանադրության մասին:

— Ա՛հ, դրանից ես տեղյակ եմ, — հիասթափված ծոր տվեց Սքարլեթը, նրա տիսմար զարմիկ Զարլզ Համիլթոնը և Հոնի Վիլքսը: Քանի տարի է, բոլորը գիտեն, որ մի օր նրանք ամուսնանալու են, թեպետ Զարլզը դրանից առանձնապես ոգևորված չէ:

— Այսինքն՝ դունրան տիսմա՞ր ես համարում, — հարցրեց Բրենտը, — բայց անցյալ ծննդյան տոներին նա անվերջ քո շուրջն էր պտտվում:

Սքարլեթն անտարբերությամբ ուսերը վեր քաշեց:

— Ես չեմ կարող նրան արգելել պտտվել շուրջս, բայց ինձ թվում է, որ նա ողիկ է:

— Բայց ես այդ նշանադրության մասին չեմ ասում, — հաղթական վրա տվեց Ստյուարտը: Էշլի Վիլքսն էնշանվում Զարլզի քրոջ՝ Մելանիի հետ:

Սքարլեթի դեմքի արտահայտությունը մնաց անփոփոխ, սակայն նրա շրթունքները սպիտակեցին: Ասես նրան սարսափելի հարված հասցին, և այդ ցնցումից հետո նա չէր գիտակցում, թե ինչ է կատարվում իր շուրջը:

Նա նայեց Ստյուարտին դեմքի այնպիսի հանգիստ արտահայտությամբ, որ վերլուծական կարողություններով աչքի չընկնող երիտասարդին թվաց, թե Սքարլեթը պարզապես զարմացած է կամ հետաքրքրված:

— Միսս Փիթին ասաց, որ նշանդրեքի մասին չեն ուզում հայտարարել մինչև մյուս տարի, բայց պատերազմի մասին այդ բոլոր խոսքություններից հետո երկու ընտանիքներն էլ որոշեցին արագացնել ամուսնությունը, որի մասին և կիայտնեն վաղը, ճաշի ժամանակ:

— Դե, Սքարլեթ, մենք բացեցինք գաղտնիքը, իսկ հիմա դու պետք է խոստանաս ճաշի ժամանակ նստել մեր կողքին:

— Այո, իհարկե, – մեքենայաբար պատասխանեց Սքարլեթը:

— Իսկ բոլո՞ր վալսերը:

— Բոլորը:

— Ի՞նչ անուշիկն ես: Վստահ եմ, որ բոլոր տղաները կատաղությունից կտրաքեն:

— Թող կատաղեն, – ասաց Բրենտը: Մենք նրանց հախից կգանք:

— Առավոտյան էլ, բարբեքյուի ժամանակ, կնստես մեր կողքին:

— Ի՞նչ ասացիր:

Ստյուարտը կրկնեց իր խնդրանքը:

— Դե՛, իհարկե:

Երկվորյակները հաղթական նայեցին իրար, բայց նրանց հայացքներում թեթևակի զարմանք կար: Նրանք, իհարկե, վստահ էին, որ Սքարլեթի նախընտրելի երկրպագուներից են, բայց երբեք աղջկա բարեհած համաձայնությունը նրանց այդքան հեշտ չէր տրվել: Սովորաբար նրանք երկար աղաջում-պաղատում էին, իսկ Սքարլեթը ձգձգում էր՝ ո՞չ համաձայնում էր, ո՞չ էլ մերժում, ծիծաղում էր, երբ նրանք նեղանում էին՝ անտարբեր սառնությամբ արձագանքելով նրանց բարկությանը:

Իսկ այսօր Սքարլեթն իրենց նվիրեց իր վաղվա երեկոն, բարբեքյուի ժամանակ իր կողքին նստելու և վալսերը պարելու արտոնությունները: Դե, նրանք ամեն ինչ կանեն, որ վալսից բացի ուրիշ պարեր չլինեն: Դրա համար արժեր դուրս մնալ համալսարանից: